Հաստատում եմ՝

տնօրեն՝ Վ. Բաբինյան

«Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

3-րդ դասարանի դասվարի

2023-2024 ուսումնական տարվա աշխատանքի պլանավորում

Դասվար՝ Թ. Շահնազարյան

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը) 3-րդ դասարանում սովորում են 4 աղջիկ:Դասարանում ձևավորված է առողջ կոլեկտիվ,որի շնորհիվ յուրաքանչյուր ոք ձգտում է իր հաջողություններով ուրախացնել կամ դժվարությունները կիսել հարազատ դարձած մարդկանց հետ:Ընդհանուր առմամբ 3-րդ դասարանի աշակերտները կազմակերպված են,ընկերասեր,ազնիվ,պարտաճանաչ:Դասապրոցեսին ցուցաբերում են ակտիվություն ,ունեն պատշաճ վերաբերմունք բոլորի հանդեպ:

1. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքումներկայացվում է միջոցառումների օրացույցային պլանի աղյուսակ:Պետք է իրականացվի

հայեցի,գեղագիտական,բարոյական,հայրենասիրական,սպորտային,քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ,բաց դասեր ,սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ,աշակերտների հայացքների,մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր:Կարևորագույն միջոցը դասապրոցեսն է,որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,ինքնուրույնության նախաձեռնում,հանդուրժողականության արտահայտում:

2. Հայեցի դաստիարակություն

2.1 Հոգևոր դաստիարակությունը սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց:Հայրենիքը սկսվում է տնից,հողից,ջրից:Հայեցի դաստիարակություն նշանակում է սիրել հայոց լեզուն,մեր ավանդույթներն ու սովորույթները,երգն ու պարը,մշակույթը,ազգային նվաճումները,հայտնագործությունները:

2.2 Գեղագիտական դաստիարակությունը մանկավարժների և դաստիարակողների համատեղ գործունեության գործընթաց է,որը ձևավորվում է գեղագիտական կուլտուրա:Գեղագիտական դաստիարակության զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի օջախներ այցելելը,էքսկուրսիաները և այլն:

2.3 Ռազմա-հայրնասիրական դաստիարակություն- Հայրենասիությունը դա սերն է հայրենիքի,սեփական երկրի նկատմամբ:Դա հոգատարությունն է հայրենիքի հանդեպ և հանուն հայրենիքի սեփական անձի զոհողությունն է:Պետք է հարգել և սիրել մեր հայրենիքը:

2.4 Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է սովորողների օրգանիզմի ձևաբանական ու ֆունկցիոնալ կատարելագործմանը,արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունության ձևավորմանը,հիվանդությունները կանխելուն և առողջության պահպանմանը:

2.5 Աշխատանքային դաստիարակություն նշանակում է զուգակցել սովորողների մտավոր և ֆիզիկական աշխատանքի ձևերը:Այդ իսկ պատճառով պետք է անընդհատ հարստացնել և համալրել նրանց աշխատանքային գիտելիքները,կարողությունները և հմտությունները և հմտությունները:

2.6 Բնապահպանական դաստիարակության նպատակը շրջապատող միջավայրի նկատմամբ դպրոցականների պատասխանատվության ձևավորումն է:Պետք է անձի մեջ դաստիարակել,որ բնությունը ազգային հասարակական հարստություն է,որը պետք է պահպանել խնամքով:

3. Դպրոց- ընտանիք կապը ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից:Այդ համատեղ գործունեությունը նախատեսում է երեխայի հանդեպ միասնական պահանջների մշակում:Ծնողներին պետք է ներգրավել դպրոցական աշխատանքների կատարմանն ու կազմակերպմանը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամանակ	Բովանդակություն	Կատարող
1	Գիտելիքի օր	01.09.2023թ.	Գաղափար տալ գիտելիքի	դասվար

			կարևորության, դերի և նշանակության մասին:Կարողանալ աշակերտների մեջ սերմանել մեծ սեր ու հավատ դեպի գիրն ու գրականությունը:	
2	Առողջ ապրելակերպի կանոնները	08.09.2023թ.	Խոսել առողջ ապրելակերպի կարևորության մասին և ի՞նչ է դա նշանակում:Թվարկել և քննարկել առողջ ապրելակերպի 4 հիմնական կանոնները:	դասվար
3	Փողոցն անցնելու կանոնները	15.09.2023թ	Նկարների միջոցով ներկայացնել ճանապարհային երթևեկության կարգավորման նշանները: Յուրաքանչյուր նշանի նշանակություն բացատրել և ներկայացնել:	դասվար
4	Իմ անկախ հայրենիք	22.09.2023թ.	Ներկայացնել մեր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Ներկայացնել խորհրդանիշները՝ զինանշանը, դրոշը, օրհներգը: Ձևավորել նրանց մեջ անսահման սեր, ջերմություն, հավատ հայրենիքի նկատմամբ, կատաղի պայքար հանուն հայրենիքի:	դասվար
5	Աշնան գույները: Բնությունն աշնանը:	29.09.2023թ	Խոսել տարվա եղանակների մասին: Դրանցից առանձնացնել աշունը: Նկարել աշունը:	դասվար
6	Լավ ընկեր	06.10.2023թ.	Խոսել լավ ընկերոջ հատկանիշների մասին և ներկայացնել առանձին-առանձին: Այնուհետև յուրաքանչյուրին հանձնարարել ներկայացնել իր լավագույն ընկերոջը՝ դրական և բացասական հատկանիշներով:	դասվար
7	Զրույց հանդուրժողականության	13.10.2023թ.	Խոսել հանդուրժողականության	դասվար

	մասին		մասին:	
8	Իմ սիրած հեքիաթը	20.10.2023թ.	Յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր սիրած հեքիաթը,նկարագրում հերոսներին:	դասվար
9	Խոսենք ճիշտ և գրագետ	03.11.2023թ.	Բերել ճիշտ և գրագետ խոսելու օրինակներ:	դասվար
10	Ի՞նչն է լավ,ինչը՝ վատ	10.11.2023թ.	Թվարկել լավ և վատ արարքներ :Քննարկել	դասվար
11	Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր իրադրություններում,ինքնօգնության և փոխօգնության տարրերըաղետի դեպքում:	17.11.2023թ.	Գաղափար տալ այն գործողությունների մասին, որոնք պետք է իրականացվեն կենցաղային վտանգավոր իրավիճակներում: Ձևավորել և զարգացնել աշակերտների մեջ ուշադրությունն ու զգոնությունը, կարողանալ գործել իրավիճակին համապատասխան:	դասվար
12	Աղետի մասին ազդանշաններ:Օգնության կանչ:	24.11.2023թ.	Գազափար տալ ազդանշանների մասին: Ձևավորել և զարգացնել աշակերտների մեջ ուշադրությունն ու զգոնությունը, կարողանալ գործել իրավիճակին համապատասխան:	դասվար
13	Բնական աղետներ	01.12.2023թ.	Խոսել բնության մասին, ներկայացնել բնության առանձնահատկությունները: Այնուհետև ներկայացնել այն աղետները, որոնք սպառնում են մեր բնությանը: Լրացուցիչ նյութերի օգնությամբ փորձել հնարավորինս շատ տեղեկություն հաղորդել այն մեթոդների և միջոցների մասին, որոնց օգնությամբ հնարավոր կլինի կանխել բնությանը սպառնացող աղետը:	դասվար
14	Ի՞նչ է երկրաշարժը	08.12.2023թ.	Ներկայանցել երկրաշարժի առաջացման պատճառները: Բացատրել, թե ինչպես է այն կատարվում: Խոսել	Դասվար

			երկրաշարժից պաշտպանվելու ձևերի մասին: Ցուցադրել նկարներ և կարճամետրաժ հոլովակներ:	
15	Ընտանիքում ամեն մեկն իր գործն ունի	15.12.2023թ.	Նկարագրել ընտանիքը Շարադրություն «Իմ ընտանիքը»	դասվար
16	Իմ անվանակից հայտնիները	22.12.2023թ.	Բերել և ներկայացնել իրենց անվանակակից հայտնիների մասին տեղեկություն	դասվար
17	Ամենահայտնի ժամանակակից անունները	12.01.2024թ.	Ժամանակակից ամենահայտնի անունները թվարկել	դասվար
18	Հայոց բանակի օր	19.01.2024թ.	Ե՞րբ է նշվում Հայոց բանակի օրը: Խոսել հայկական տոնացույցի ամենահպարտ օրվա մասին :	դասվար
19	Ճանապարհային երթևեկության կանոնները	26.01.2024թ.	Երթևեկության կանոնների մասին գիտելիքների ամփոփում:Վերհիշել խաչմերուկների և դրանց ճիշտ անցկացման ,հետիոտնային անցումները, դրանցից օգտվելու կանոններն ու ձևերը: Վերհիշել լուսակրի կարևորությունը և օգտագործման ձևերը:	դասվար
20	Ինչպիսի՞ ընկեր եմ ես	02.02.2024թ	Ի՞նչ է քո համար ընկերությունը: Ընկերը պետք է լինի… Ինչպիսի՞ ընկեր եմ ես	դասվար
21	Ի՞նչ են սովորեցնում Թումանյանի հեքիաթները	09.02.2024թ.	Ի՞նչ հեքիաթագրերի անուններ գիտեն: Ի՞նչ հեքիաթներ գիտեն: Խոսել Թումանյանի մասին և նրա հեքիքթներից ինչ են սովուում	դասվար
22	Կարելի է և չի կարելի	16.02.2024թ.	Т-- աձև մեթոդով ներկայացնել «Կարելիներն ու չի կարելիները»	դասվար
23	Ի՞նչ պետք է անենք , որ չհիվանդանանք	23.02.2024թ.	Ինչ պետք է անել ,որպեսզի չհիվանդանանք(մարզվել,վիտ ամիններով հարուստ	դասվար

			ուտելիքներ ուտել,զբոսնել:) Ինչի՞ց զգուշանալ:	
24	Ամեն իր պետք է իր տեղն ունենա	01.03.2024թ.	Դասարանի և դպրոցի մաքրությանն ուղղված աշխատանքներ:	դասվար
25	Իմ ազատ ժամանակը	15.03.2024թ.	Պարզել, թե ով ինչպես է անցկացնում իր ազատ ժամանակը:	դասվար
26	Կարդացած հեքիաթների նկարազարդումներ	22.03.2024թ	Ընթերցել հեքիաթներ: Կարդացած հեքիաթը նկարազարդել:	դասվար
27	Հաղթում է նա, ով չի հանձնվում	05.04.2024թ.	Պայքարի անհրաժեշտության գիտակցում: Հաղթանակի հասնելու ուղիների ներկայացում:	դասվար
28	Տղաների և աղջիկների տարբեր վարքագծերի առանձնահատկությունները	12.04.2024թ	T-աձև մեթոդով առանձնացնել տղաների և աղջիկների տարբեր վարքագծերի առանձնահատկությունները, քննարկել:	դասվար
29	Խաչմերուկները և դրանց տեսակները	19.04.2024թ	Գաղափար տալ երթևեկության կանոնների մասին:Խոսել խաչմերուկների և դրանց ճիշտ անցկացման մասին: Առանձնացնել հետիոտնային անցումները, դրանցից օգտվելու կանոններն ու ձևերը: Խոսել և ներկայացնել լուսակրի կարևորությունը և օգտագործման ձևերը:	դասվար
30	Հայաստանի խորհրդանիշները	26.04.2024թ	Մտագրոհ մեթոդով ներկայացնել թեման: Առանձին –առանձին ներկայացնել Հայաստանի խորհրդանիշները	դասվար
31	Հայաստանն իմ աչքերով	03.05.2024թ.	Խոսել Հայստանի մասին: Գրել«Հայաստանն իմ աչքերով» (շարադրություն)	դասվար
32	Ճանապարհային գծանշումներ	10.05.2024թ.	Ներկայացնել, թե ինչ են իրենցից ներկայացնում ճանապարհային գծանշումները, ինչպես պետք է օգտվել դրանցից: Այդ ամենը	դասվար

			ցուցադրել գործնականում:	
33	Երբ մեծանամ	17.05.2024թ.	Պարզել, թե աշակերտներից յուրաքանչյուրը ինչ մասնագիտություն է ուզում ընտրել և ինչ է անում դրա համար:	դասվար
34	Տրանսպորտային միջոցների տեսակները: Տրանսպորտային միջոցների արգելակման ճանապարհը	24.05.2024թ.	Ինչ տրանսպորտային միջոցներ կան, ներկայացնել դրանցից մի քանիսը: Գաղափար տալ արգելող նշանների մասին:	դասվար

Ծնողական ժողով

2023-2024 ուստարի

Քննարկվող հարցեր		Ամիս, ամսաթիվ
1.	.Դասարանական ծնողական խորհրդի ընտրություն: .Կարգապահական հարցերի քննարկում: .Ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում : .Ուշացումների և բացակայությունների քննարկում:	07.09.2023թ.
2.	.Ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում: .Կարգապահական հարցերի քննարկում: .2023-2024 ուստարվա I կիսամյակի ամփոփում:	27.12.2023թ.
3.	.Կարգապահական հարցերի քննարկում: .Ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկում : .Ուշացումների և բացակայությունների քննարկում:	15.01.2024թ.
4.	.Ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում: .2023-2024 ուստարվա II կիսամյակի ամփոփում: .Էքսկուրսիայի կազմակերպում:	06.06.2024թ.

Ծնողական ժողով

«Խրախուսումն ու պատիժը՝ որպես դաստիարակչական մեթոդ ընտանիքում»

Ժողովը ընթանում է ինտերակտիվ ձևով: Բոլոր ներկաները բաժանված են խմբերի:

- ✓ «խրախուսման» խումբ
- ✓ «պատժի» խումբ
- ✓ «փորձագետների» խումբ
- ✓ «ծնողների» խումբ:

Գրատախտակին գրված է ժողովի նախաբանը:

Ինչպես դեղորայքը չի ծառայում նպատակին, եթե չափաբաժինը չափից շատ է, այնպես էլ խրախուսումն ու քննադատումը՝ երբ անցնում են արդարության չափը:

<u>Ա.Շոպենհաուեր</u>

Դասղեկի ներածական խոսքը

Ինչպես դաստիարակել երեխային՝ բացահայտելու համար այն լավագույնը, որը կա նրա մեջ, և արտահայտել ողջ լավագույնը, որը կա մեր մեջ: Միակ, բացառիկ բաղադրատոմս չկա և չի կարող լինել:

Ինչպես որ չկան իդեալական երեխաներ, այնպես էլ չկան իդեալական ծնողներ:

Ծնող լինել՝ նշանակում է շարունակ սովորել ծնող լինել, զարգացնել կանխազգացողությունը, հնարավորության սահմաններում ինքնակատարելագործվել:

Պատժելը և խրախուսելը՝ որպես դաստիարակության մեթոդ, ոչ միշտ են դրական դեր խաղում երեխայի անձի զարգացման ընթացքում, սակայն ծնողները հաճախ են դրանք կիրառում: Ահա, այս մասին է մեր այսօրվա զրույցը:

Շատ հաճախ երեխան դառնում է նյարդային, ագրեսիվ և անհավասարակշիռ, երբ ծնողները սխալ ու կոպիտ են կիրառում նրանց հանդեպ պատժի միջոցները, և որքան էլ տարօրինակ հնչի, նաև խրախուսանքի միջոցները:

Փորձենք հասկանալ՝ ի՞նչ է պատիժը և խրախուսանքը, ինչպիսի՞ն են դրանք լինում և անրաժե՞շտ են արդյոք դաստիարակության մեջ:

Սկսենք մեր աշխատանքը:

1. Քննարկվում են հարցեր. «Ինչ է խրախուսանքը» և «Ինչ է պատիժը»: Քննարկումը կատարվում է հետևյալ սխեմայով.

- խմբերի պատասխանները /խրախուսում և պատիժ/
- լսարանի կարծիքը /ծնողներ/
- փորձագետների կարծիքը:

2. «Ծնողների կողմից ի՞նչ խրախուսման կամ պատժի կիրառման տեսակներ են օգտագործվում» հարցի քննարկում: Աշխատանք խմբերով:

- խմբերի պատասխանները
- ծնողների կարծիքը
- փորձագետների կարծիքը:

4-9 դասարանցիների ծնողական ժողովի նախապատրաստման ժամանակ կատարվել է նախնական անկետավորում տվյալ թեմայով:

Առաջարկվում է տեսնել, թե այդ առումով ինչ են մտածում երեխաները:

Ցուցադրվում են սահիկներ:

Սահիկ1.«Աշակերտների կողմից տրված խրախուսման և պատժման բացատրությունները»:

Սահիկ 2.«Ինչպես են ընտանիքում կիրառվում խրախուսումն ու պատիժը»:

Մեջբերումներ դպրոցականների հարցաթերթիկներից.

- «Իմ ընտանիքում չկա ոչ խրախուսանք, ոչ պատիժ: Մեզ մոտ պայմանագրային հարաբերություններ են՝ արա սա, փոխարենը ստացիր դա, չես անի՝ ոչինչ էլ չես սատանա: Միգուցե դա սառն է, բայց ինձ ձեռք է տալիս»:
- «Ինձ հաճախ են պատժում, իսկ խրախուսելու մասին անգամ խոսք լինել չի կարող, չնայած այն բանին, որ ջանում եմ ամեն ինչ անել»:
- «Ինձ վրա չեն բարկանում, բայց առանձնապես չեն էլ գովում»:

3. Հարցերի քննարկում.

- Ինչի՞ համար է պետք պատժել երեխային:
- Ինչի՞ համար է պետք խրախուսել երեխային:

Քննարումը կատարվում է նույն սխեմայով:

Ծնողական ժողովի նախապատրաստման ընթացքում երեխաներին հանձնարարված էր պատասխանել մեկ հարցի.«Եթե ես լինեի հրաշագործ, ապա

ինչից կազատվեի դաստիարակության մեջ»: Տեսեք, թե ինչ պատասխաներ են տվել մեր աշակերտները:

Ցուցադրվում է այս հարցի պատասխաներին համապատասխանող սահիկը:

4.Սահիկը դիտելուց հետո լսարանը, որպես խմբային աշխատանք, ավարտում է հետևյալ անավարտ նախադասությունները.

«Ես զովում եմ երեխային,եթե..»,«Ես բարկանում եմ երեխայի վրա, եթե..»,«Ես նրան նվերներ եմ տալիս, եթե...»,«Ես արգելում եմ նրան, եթե...»:

Խմբերի ներկայացուցիչները ներկայացնում են աշխատանքի արդյունքները:

Դասղեկը անց է կացնում խմբային աշխատանքի արդյունքների քննարկում:

Ապա առաջարկվում է դահլիճում ներկա ծնողներին կարդալ իրենց կողմից ավարտված նախադասությունները և խոսքը տալիս է փորձագետներին:

Դասղեկ

5. Առաջարկում եմ քննարկել որոշ խնդրահարույց իրավիճակներ, որոնց կարելի է բախվել կյանքի ընթացքում:

Իրավիճակ 1

Ծնողները երկար մտածում են՝ ի՞նչ նվիրել իրենց աղջկան ուսումնական տարին ավարտելու կապակցությամբ, որպես խրախուսանք՝ լավ սովորելու համար: Գնեցին գեղարվեստական գիրք և ամառային լուսանկարների ալբոմ: Նվերը ստանալով՝ աղջիկը բարկացավ. «Ես մտածում էի, որ դուք ինձ համար որևէ արժեքավոր բան կգնեիք: Ա'յ, օրինակ, ընկերուհուս ծնողները անվավոր չմուշկներ են նվիրել»:

Իրավիճակ 2

Ընտանիքում փոքրիկ է ծնվել, որից հետո ավագ որդու վարքագիծը կտրուկ փոխվել է: Ավելի շատ ագրեսիվություն է սկսել ցուցաբերել ծնողների նկատմամբ: Փոքր եղբայրը նույնպես դարձել է նրա ագրեսիայի առարկան:Հերթական անգամ, երբ մայրը խնդրում է նրան զբաղվել փոքր եղբոր հետ, նա պատասխանում է. «Ես դայակ չեմ»: Ծնողները բարկացան և պատժեցին նրան:

Իրավիճակ 3

Ընտանիքում ընդունված կարգ կա, որ երեխաները շաբաթվա վերջում հաշվետվություն են ներկայացնում իրենց ուսման վերաբերյալ: Եթե ծնողների կարծիքով արդյունքները լավ են, ապա երեխաները խրախուսվում են դրամով: Եթե երեխաների ուսումնական արդյունքները ծնողներին չեն բավարարում, ապա նրանք, որպես պատիժ, պետք է աշխատեն տանը կամ ամառանոցում՝ մաքրություն անեն,

ջրեն այգին և այլն: Երեխաները ջանում էին սովորել, որպեսզի խուսափեն աշխատանքով պատժվելուց:

Ընթանում է իրավիճակների քննարկում:

Դասղեկ՝ Կարողացա՞նք մենք այսօրվա մեր հանդիպման ընթացքում պատասխանել. «Ինչպե՞ս ճիշտ կիրառել պատիժն ու խրախուսանքը» հարցին: Երևի թե ոչ, որովհետև դրա հստակ պատասխանը ոչ-ոք չգիտի: Երեխայի դաստիարակությունը բազմաթիվ գործոններից է կախված և ունի անհատական առանձնահատկություններ: Կարևոր է, թե ինչպես են ձևավորվում նրանց փոխհարաբերությունները, ինչքանով են երեխաները և ծնողները հույզերով մտերիմ միմյանց հետ: Ես հաջողություն եմ մաղթում ձեզ՝ ձեր երեխաների դաստիարակության հարցում: Եվ վերջում ուզում եմ մի քանի մեջբերումներ անել Դորոտի Լոու Նոլթի «Հեղափոխություն կրթության մեջ» գրքից.

- Երեխաները սովորում են այն ամենը, ինչ տեսնում են իրենց շուրջը:
- Եթե երեխան ապրում է քննադատության մթնոլորտում՝ նա սովորում է քննադատել:
- Եթե երեխան ապրում է թշնամության մթնոլորտում՝ նա սովորում է պատերազմել:
- Եթե երեխան շրջապատված է խղճահարությամբ՝ նա սովորում է ինքն իրեն խղճալ:
- Եթե երեխան զգում է խրախուսանք՝ նա սովորում է ինքնավստահ լինել:
- Եթե երեխային գովում են՝ նա սովորում է բարեհամբույր լինել:
- Եթե երեխան ապրում է սիրո մթնոլորտում՝ նա սովորում է սիրել:
- Եթե երեխան ապրում է անվտանգության զգացումով՝ նա սովորում է հավատալ ինքն իրեն և շրջապատին:

Դասղեկի աշխատանքի բնույթը, մանկավարժական գործառույթները, նպատակը և

աշխատանքի ուղղությունները

Դասղեկները դասարանի հետ հիմնական աշխատանք վարողներն են: Գործունեության շրջանակը ենթադրում է հետևյալ աշխատանքները.

1. Դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում՝

- հետևում է աշակերտների հաճախելիությանը (մատյանում նշում է բացակայությունները, հետևում է, որ դրանց համար փաստաթուղթ ներկայացվի),
- աշխատում է առարկայական ուսուցիչների հետ՝ առաջադիմության բարձրացման ուղղությամբ (պարբերաբար ստուգում է օրագրերը, վերլուծում է ընթացիկ և վերջնական գնահատականները)
- հետևում է աշակերտների կարգապահությանը:

2. Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում՝

- կազմակերպում է դասարանական ժողովներ,
- կազամկերպում է կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ,
- կազմակերպում է այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ:

3. Սովորողների հանրօգուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպում:

4. Աշխատանք սովորողների ծնողների հետ՝

- ծնողներից ակնկալում է, որ հետևեն երեխայի առաջադիմությանը,
- ծնողների հետ անհատական զրույցներ է ունենում,
- ծնողական ժողովներ է կազմակերպում:

5. Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին՝

- ծանոթանում է սովորողների ընտանիքի կազմին,
- նրանց բնակարանային և կենցաղային պայմաններին:
- բարոյահոգեբանական պայմաններին

6. Դասարանի աշակերտների սննդի կազմակերպում (նյութական օգնության կազմակերպում):

7. Թղթավարություն՝

ա) ամփոփում է աշակերտների առաջադիմության տվյալները,

բ) լրացնում է դասամատյանը,

գ) լրացնում է անձնական գործերը,

դ) մշակում է դասղեկի աշխատանքային պլան:

8. Աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների խորացման ուղղությամբ:

Դասղեկական ժամի դաստիարակչականգործառույթները

Դասղեկական ժամը աշակերտների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևերից մեկն է: Այն ներառվում է դասացուցակի մեջ և անց է կացվում յուրաքանչյուր շաբաթ՝ որոշակի օր:

Դասղեկական ժամի ձևերը տարբեր են. դասախոսություն, զրույց, բանավեճ, վիկտորինա, մրցույթ, խաղ, կոնֆերենս, հեռակա ճանապարհորդություն, տոն և այլն:

Դասղեկական ժամը կատարում է հետևյալ դաստիարակչական ֆունկցիաները. կրթական, կողմնորոշման, ուղղորդման և ձևավորման:

Կրթական ֆունկցիա - կարևորվում է նրանով, որ դասղեկի ժամը ընդլայնում է աշակերտների գիտելիքների շրջանակը: Դասղեկական ժամի առարկա կարող է հանդիսանալ գիտությունների տարբեր ոլորտներից բերված տեղեկություններ, սոցիալական կյանքի երևույթներ, երեխաների հոգեբանական խնդիրներ:

Կողմնորոշող ֆունկցիա - նպաստում է իրադարձություններին և երևույթներին բարոյական գնահատական տալու ժամանակ՝ հենվելով բարոյական և հոգևոր արժեքների վրա, աշակերտների մոտ աշխարհի հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը: Հաճախ դասղեկական ժամերը օգնում են աշակերտներին կողմնորոշվել հասարակական արժեքների մեջ:

Ուղղորդող ֆունկցիա - դասղեկի ժամի այս ֆունկցիան նախատեսում է աշակերտների գործունեության կազմակերպում, ազդելով նրանց վարքագծի վրա, որպեսզի գիտելիքները վերածվեն համոզմունքի:

Ձևավորող ֆունկցիա - արտահայտվում է աշակերտների մոտ իրենց արարքների և իրենք իրենց գնահատելու կարողության ձևավորման մեջ, օգնում է վարել երկխոսություն, շարադրել փաստերով, արտահայտել սեփական կարծիքը:

Հաճախ դասղեկի ժամը միաժամանակ կատարում է նշված բոլոր չորս ֆունկցիաները. այն և' կրթում, և' կողմնորոշում, և' ուղղորդում, և' ձևավորում է աշակերտներին: Այս ֆունկցիաները, հնարավորինս պետք է արտացոլվեն դաստիարակչական միջոցառման նպատակի ձևակերպման մեջ:

Դասղեկի ժամերի թեմատիկան տարբեր է: Դասղեկի ժամերը կարող են նվիրվել.

- բարոյաէթիկական
- գիտության և իմացության
- գեղագիտական
- պետության և իրավունքի
- հիգենայի և առողջ ապրելակերպի
- հոգեբանական
- բնապահպանական
- համադպրոցական /կարևոր հասարակական իրադարձությունների, տոնական օրերի/ խնդիրների:

Դասղեկի խնդիրը – ստեղծել մանկավարժական տարածք երեխայի ինքնության զարգացման, նրա ներաշխարհի հարստացման համար:

Լավ է, երբ երեխաների հետ շփվելիս դաստիարակը կառաջնորդվի յուրահատուկ կանոնակարգով, որը իր մեջ ներառում է այսպիսի կանոններ.

- Սիրել երեխաներին
- Երբեք չմոռանալ խրախուսել երեխաներին լավ արարքի համար
- Երբեք չհամեմատել երեխաներին
- Չունենալ սիրելիներ
- Երբեք չբողոքել երեխաներից
- Կարողանալ ներել
- Կարողանալ օգնել
- Կարողանալ համբերել և սպասել
- Կարողանալ հետաքրքիր մարդ լինել
- Կարողանալ սիրով պահանջել և սիրել պահանջելով
- Կարողանալ յուրաքանչյուրի համար բարի խոսքեր գտնել

- Կարողանալ ընդհանուր լեզու գտնել ուսուցիչների և ծնողների հետ
- Կարողանալ ցանկացած աշխատանք կատարել երեխաների հետ
- Յուրաքանչյուր երեխայի մոտ գտնել կարևոր որակներ և ջանալ զարգացնել դրանք
- Ամեն ինչ հորինել նրանց հետ միասին, այլ ոչ թե նրանց փոխարեն
- Սովորեցնել երեխաներին բարություն, պատասխանատվություն, հարգանք իրենց և մյուսների նկատմամբ:

Դաստեկությունը բավականին աշխատատար, բարդ գործ է: Միշտ պետք է զբաղվել երեխաների հետ, միշտ նոր սնունդ տալ նրանց ուղեղին, պատկերացմանը, հոգուն, արդյունքը երկար սպասել չի տա:

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դաստեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտա¬նիքի) և դրա մասինմեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձ-նահատուկպայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և ման-
կավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանցապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժականպահանջ¬ների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնա¬կան օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրո¬նային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադի¬մության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլմիջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին

խրախուսանքիկամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը: